



# ԶՕՐ. ԼԱՀՈՒՏԷՆ ԿՈՉ՝ ՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երկվ կոչ ուղղեց ՄԱԿԻ Ապագա-վորության խորհուրդին՝ յաւելելով ժամանակամիջոց ընծայել Իրաքի տագնապին առնչուած ՄԱԿԻ թիւ 1441 բանաձեւի գործադրութեան համար:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ ԱՆՄՈՎԻՔԻ գլխաւոր քննիչ Հանս Պլիքս եւ Մոհամէտ Պարաստի երէկ ներկայացուցին տեղեկագիրներ, որ շեշտեցին, որ Իրաք կը ցուցաբերէ գործակցութիւն, ինչ որ առիթ կ'ընծայէ իրենց աշխատելու պատճառները:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ խաղաղ լուծումը կ'ապահովէ համաշխարհային կայունութիւնը եւ կը պահպանէ արդարութիւնը՝ փաստելով աշխարհին, որ միջապգային հանրութիւնը տակաւին կարող է խաղաղ լուծումներ ապահովելու տագնապներու:

## ԻՐ ԽՕՍԲԸ ՈՒՂՂԵԼՈՎ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՄ

# ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է, ՈՒՐԻՇ ԲԱՆ ԶԻ՝ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ

Կ'ԸՍԵ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքին մէջ մտաւորականներու երրորդ խորհրդի ղեկավար հանդիպումը տեղի ունեցաւ հրաւերով եւ նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի, Ուրբաթ, 14 Փետրուար 2003ին, թանգարանին մէջ:

Շեշտեց վեհափառ հայրապետը:

Լիբանանահայ երէք թերթերու՝ «Ալ-Պալ», «Զարթօնք» եւ «Արարատ», տնօրէնները՝ Շահան Գանտահարեան, Պարոյր Աղպաշեան, եւ Ահարոն Շիրազեան ամփոփ քննարկներ կատարեցին հերթափոխով: «Հայ մտաւորականութիւնը, արեւմտահայերէնը եւ հայ մամուլը», «Ժամանակակից արեւմտագիտութիւնը եւ տպագիր հայ մամուլը», «Ալգային մտաւորականութիւնը եւ հայ մամուլը»: Ապա, ներկայ 35 մտաւորականները, ստանալով հարցաթուղթեր, Գրիգոր վրդ. Զիֆթեանի եւ Ժիրայր Դանիելեանի, միտքերու փոխանակումով պատասխանատուներ կատարեցին եւ լուծումներ առաջարկեցին, հայ մտաւորականին դերակատարութիւնը մեր կենսական ներս վերընտրելու եւ ազգակերտումին նպաստող»:

Համացանցի կայքէջերու ճամբով հայ մամուլի աշխատանքին մասին խօսելով՝ Շ. Գանտահարեան շուրջ՝ Հայ Դատ, Ղարաբաղեան տագնապ, պէտք է միանանք: Հայ մամուլին ու մտաւորականութեան անդրադարձումը՝ անանհրաժեշտ նկատեց հայ մտաւորականութեան խմբումը հայ մամուլին շուրջ՝ թունաւեանակալան նոր վերնատան մը ծնունդով, որ ըլլայ «փրկութեան վերնատունը» սփիւռքահայ մտաւորականութեան:

Մտաւորականներու արծարծած մտածումները իրենց տարբերութիւններով, որովքով, որ ըլլայ «փրկութեան վերնատունը» սփիւռքահայ մտաւորականութեան:

Մ. Շիրազեան իր քննարկումները մէջ հարցադրեց «ազգային մտաւորականութիւնը» հասկացողութիւնը, որուն մէջ բացատրութիւն պէտք է տրուի բոլորին կողմէ: «Գործելակերպի մէջ

Շարք՝ էջ 10

## ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱԻԱԲ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ պաղեստինեան իմքաւորումներու համախմբումին կազմակերպութեամբ երէկ պաղեստինեան «Մար էլիա» գաղթականացուցիչ մէջ տեղի ունեցաւ համաք մը, առ ի պարակցութիւն իրաքցի եւ պաղեստինցի ժողովուրդներուն: Համաքին ներկայ էին պատուիրակութիւններ՝ որոնց շարքին Հ. Գ. Լիբանանի Կեդ-

րոնական կոմիտէին պատուիրակութիւնը: Համաքին խօսք առին երեսփոխան Մարուան Յարէս, նախկին երեսփոխան Չահէր Սաթիպ եւ տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչներ, որոնց շարքին՝ Հ. Գ. Դաշնակցութեան կողմէ Պարոյր Տէր Դուկասեան:

**ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ**  
**ՀԱՅ ԿԱԹ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ԿԱՐԺԱՐԱՆ ԾԱՆԿԵՐՈՅԹ LE BRISTOL 29 ՄԱՐՏ 2003**

## ՄԱՀԱԶԴ

Տիար Միհրան Քէշիշեան  
Տէր եւ տիկին Տիգրան Քէշիշեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Կարպիս Քէշիշեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Սեդրակ Կէօզերեան եւ զստեր  
Տէր եւ տիկին Գէորգ Քէշիշեան եւ զաւակունք  
Քէշիշեան ընտանիք  
Մոգեան ընտանիք  
Գոնիայեան ընտանիք  
Դաւիթեան ընտանիք  
Կէօզերեան ընտանիք  
Պետրոսեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գործնախն եւ հարազատին՝

## ԱԶՍՈՒՆԻ ԲԷՇԻՇԵԱՆԻ (ՇՈՒՆԱՂՍՈՒՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 13 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատե հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Ուրբաթ, 14 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պոլսի Համալսարանի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, «Ճեննապետ» շէնք, 4 յարկ, «Մար Եոլսէֆ» հիւանդանոցի փողոց, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Փետրուարին:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Շամիրամ Վարդանեան  
Տէր եւ տիկին տղթ. Յովիկ Վարդանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ջարեհ Ճէրճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ասատուր Շիրազեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Կարպետ Վարդանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Պետրոս Գրիգորեան եւ զաւակունք  
Խաչատուրեան ընտանիք  
Ճէրճեան ընտանիք  
Շիրազեան ընտանիք  
Քէօզերեան ընտանիք  
Արթինեան ընտանիք  
Վարդանեան ընտանիք  
Պիճիմեան ընտանիք  
Սիմոնեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, քեռին եւ հարազատին՝

## ՄԱՆՈՒԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ (ՇՈՒՆԱՂՍՈՒՆ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 11 Փետրուար 2003, կէսօրէ ետք ժամը 2:30ին, սրտի կաթուածի հետեանքով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Հինգշաբթի, 13 Փետրուար, կէսօրուան ժամը 12:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին վակարանը, Չալքա, «Իլիքս» շէնք, պղոց B. Ա. յարկ, Ուրբաթ 14, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Փետրուարին:

**ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ Կ'ԱՆՂԱՄԱԿՑԻ**  
**BRITISH COUNCIL -ին**

## Հիմնադրութեան 20-ամեակի հերթական նուէրը ուսանողներուն

Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Արուեստից վարժարանը Փետրուար 2003-ին արձանագրուեցաւ British Council-ի ELT Club-ի անդամ:

Այս անդամակցութեամբ, վարժարանը պիտի կարենայ օգտուիլ անգլիական այդ հեղինակաւոր հաստատութեան կրթական եւ կազմակերպական կարողականութեան:

**Մի՛շտ քայլ մը առջեւ. Մեսրոպեան Արուեստից վարժարանին մէջ, այս խոստումը ի պօրու կը մնայ մի՛շտ**  
Bourdj Hammoud, Arax Street Tel: 01/260504 Fax: 01/262955 www.mesrobian.com

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Տիանա Մանկասարեան եւ զուտորը՝ Նաթալի Տէր եւ տիկին Վահէ Պուրուսուզեան եւ զաւակը  
Տիկին Ազնիւ Պայրամեան եւ զաւակունք  
Տիար Յակոբ Մանկասարեան եւ զաւակունք  
Տիար Ասատուր եւ օրդ. Արշալոյս Տեմիրճեան  
Պախէճեան ընտանիք  
Կէօզերեան ընտանիք  
Կոստանեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ, մօրեղբոր, քեռայրին եւ հարազատին՝

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆԻ (ՇՈՒՆԱՂՍՈՒՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 13 Փետրուար 2003, առաւօտեան ժամը 10:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 15 Փետրուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նաքաշ, «Տեմիրճեան» կեդրոնին կից, «Արլեան» շէնք, 4րդ յարկ:

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**  
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգային մարմինը կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:  
Տիկին Յասմին Սլրեան եւ զաւակունք տղթ. Չաքարիա Սլրեանի մահուան 4րդ տարելիցին առիթով, 16 Փետրուար:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Սեդա Մեսրոպեան  
Տէր եւ տիկին Թորոս եւ Ջանի Մեսրոպեան եւ զուտորը  
Տէր եւ տիկին Ժանօ եւ Թամար Պէրպէրեան եւ զաւակունք  
Տիկին Ալիս Դապիպեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Գալուստ Մեսրոպեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Յարութիւն Ղազարեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Նիկոլ Արզումանեան եւ ընտանիք  
Շահինեան ընտանիք  
Պէրպէրեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

## ԲԻԻԶԱՆԴ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 14 Փետրուար 2003, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 15 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ժէլ Էլ Տիպ, Կիրակի 16, Երկուշաբթի 17 եւ Երեքշաբթի 18 Փետրուարին:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Աստղիկ Մինասեան եւ ընտանիք  
Տղթ. Սարգիս Համբարեան եւ ընտանիք  
Տիգրան Համբարեան եւ ընտանիք  
Նայրի Համբարեան  
Տէր եւ տիկին Երոկի Մանուր  
Հոմար ընտանիք  
Զոպեան ընտանիք  
Մանիսաճեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, մօրաքրոջ եւ հարազատին՝

## ԱՐՓԻՆԷ ՀԱՄԱՐԵԱՆԻ (ՇՈՒՆԱՂՍՈՒՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 13 Փետրուար 2003ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 15 Փետրուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Թրիփոլի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, AUB Alumni Clubին մէջ, Կիրակի 16 եւ Երկուշաբթի 17 Փետրուարի կէսօրէ ետք ժամը 3:00էն 8:00:

## ԿԸ ՆՈՒՐԵՆ

● Սանուկ Վարդանեանի մահուան առիթով, տեր եւ տիկին Կարո Զահրէճեան 50,000 Լ.Պ. Զիլիսի Հայրենակցական Սիւնթեան սանձրու ֆոնտին:

# ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏ ՅՈՎՍԷՓ ԳԱՄՊԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ԶՈՒՑԱՆԿԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄ՝ «ՆՈՎ՝Զ ԱՐՔ»-Ի ՄԷՋ

Մեր ազգային իրականության մեջ անուրախալի դեր կատարող հայ մամուլին պատկանում է օրինակելի նախաձեռնություններ մը. «Նոս'յ Արք» ցուցարարը կապակերպեց գեղանկարիչ Յովսեփ Գասպարեանի գործերուն ցուցադրությունը, որուն հաստիքը ամբողջությամբ կը նուիրուի «Ազդակ»-ի ֆոնտին:

Ինչ արուեստագետ ան իր արուեստով կը նպաստէ մարդկայնական եւ ազգային նպատակներու տարածման եւ գործնապէս իր արուեստը կը ձօնէ ի նպաստ Հայ Դատի պահանջատիրութեան: Անոր գործերը ունին մարդասիրական եւ հայրենասիրական բնույթ եւ կը պաշտպանեն իրաւարկուած ժողովուրդի մը



Յուցահանդէսի բացման ընթացքին



Չախէն աջ՝ դեսպան Յովհաննիսեան, արուեստագետը, առաջնորդ սրբազան հայրը եւ Գեորգ Թորամանեան



Գեորգ Թորամանեանի հովանաւորութիւնը վայելող այս ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ երէկ՝ Ուրբաթ, 14 Փետրուարի երեկոյեան ժամը 6:00ին: Ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, հայ կաթողիկէ պատրիարքական փոխանորդ Վարդան եպս. Ազգարեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, լիբանանահայ միութիւններու եւ կառոյցներու ներկայացուցիչներ եւ արուեստասէրներ:

Նախքան ցուցահանդէսին բացումը, խօսք տուաւ «Նոս'յ Արք» ցուցարարին սեփականատէր դոկտ. Մովսէս Հերկելեան, որ յայտնեց, թէ ցուցարարը 1995էն ի վեր կը կապակերպէ տարեկան բարեսիրական ցուցահանդէսներ, որոնց հաստիքը կը յատկացուի բարեսիրական նպատակներու: Ան աւելցուց, որ արուեստագետ Յովսեփ Գասպարեանի իսկ առաջարկով, ցուցահանդէսին հաստիքը պիտի յատկացուի «Ազդակ»-ի ֆոնտին: Ապա ան ներկայացուց գեղանկարիչը: «Թէեւ Յովսեփ Գասպարեան առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ իր գեղանկարները, սակայն ան իրաւամբ արժանի էր տարիներ առաջ ունենալու իր ցուցահանդէսը: Իր

դատը», ըսաւ Մ. Հերկելեան եւ նշեց, որ Յ. Գասպարեանի գործերը նոր որակ եւ մակարդակ կու տան ազգային թեմաներ շօշափող գեղանկարչութեան:

«Ազդակ»-ի բնտանիքին անունով իր սրտի խօսքով հանդէս եկաւ Հրաչ Վարժապետեան: Ան գնահատեց ազգային նպատակի համար կատարուած այս նախաձեռնութիւնը եւ շնորհակալութիւն յայտնեց ցուցահանդէսի հովանաւոր Գեորգ Թորամանեանի, արուեստագետ Յովսեփ Գասպարեանի եւ «Նոս'յ Արք» ցուցարարին: «Երբ արուեստագետ մը իր գործերը կը նուիրէ հայ մամուլին, այս կը նշանակէ, թէ մեր մամուլը մեծ տեղ ունի մեր իրականութեան մէջ: Այս գործը իր բարոյական արժէքով կը ներկայացնէ հայ մամուլին դերը՝ մեր կեանքին մէջ», ըսաւ ան: Իր խօսքին աւարտին, Հ. Վարժապետեան մաղչեց, որ նման ձեռնարկներ բազմանան մեր կեանքին մէջ՝ ի նպաստ ազգային կառոյցներու:

Այս կատարուեցաւ ցուցահանդէսին բացումը: Յուցարարութեան դրուած են Յովսեփ Գասպարեանի քառասուն իւղանկարները, որոնք ունին ազգային պատմութիւն: Անոնք կը ներկայացնեն ազգային պահանջատիրութեան, բռնութեան դէմ ըմբոստութեան, գաղափարական պայքարի թեմաները, զորս արտայայտելու համար արուեստագետը օգտագործած է հայկական մշակոյթի անսպասելի խորհրդանշաններ: Անոր երանգապանակը հարուստ է հայկական վառ գոյներով, ինչպէս նաեւ հողի երանգներով:

Պայքարի թեմային կողքին, Յովսեփ Գասպարեանի գործերը կը պատկերեն խաղաղութիւնը բուրրող գիւղական տեսարաններ: Անոր գործերուն ամբողջութիւնը իր մէջ կը պարունակէ իր դաշտին համար պայքարող եւ միաժամանակ խաղաղասէր ժողովուրդի մը ոգին:

Նշենք, որ ցուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ 24 Փետրուար: Յուցահանդէս կարելի է այցելել ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 19:00:

# ՆՈՎ՝Զ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլի Ուրբաթ, 14 Փետրուարի թիւերը իրենց լուսարձակները գլխաւորաբար կեդրոնացուցած էին շրջանային պարգացումներուն, եւ մասնաւորաբար Իրաքի դէմ ամերիկեան հաւանական յարձակման վրայ, թէեւ լիբանանեան ներքին քաղաքական առօրեան ալ չէր դադրած նիւթ տրամադրել օրաթերթերուն:

«Նահար» օրաթերթը կը հաղորդէր վարչապետ Ռաֆիք Հարիրիի Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքին հետ տեսակցելու եւ Պէյրութ վերադառնալու լուրը: Ըստ թերթին, վարչապետ Հարիրիի հետ նախագահ Շիրաքի տեսակցութեան ընթացքին, վերջինս իրաքեան իրադարձութիւններու ակնարկելով ըսած է, որ «իրականութեան ժամը արդէն հնչած է, եւ Միացեալ Նահանգներ պատերազմ կ'ուզեն»:

«Նահար» առաջին էջով լոյս ընծայած է նախկին վարչապետ Սէլիմ Հրաի «Այն ինչ որ այսօր կ'ընդհատուի, որուն մէջ Հրաի կ'անդրադառնայ իր կառավարութեան օրով արձակուած ամբաստանութիւններուն, եւ կ'ըսէ, թէ այն ինչ որ սխալ կը նկատուի իր իշխանութեան օրով, կը կրկնուի նաեւ ներկայիս եւ ի տես այս երեւոյթին ո՛չ մէկը կը համարձակուի քարտեզները»:

«Պայքար» օրաթերթին համաձայն, իրաքեան հարցին գծով նախագահ ժաք Շիրաքի վարչապետ Սէլիմ Հրաի կը նշեց, որ իրաքի դէմ կորիզային իրենց ընդհանրութիւնը յայտնած են Իրաքի դէմ հաւանական պատերազմը: «Անուար» նաեւ կը հաղորդէ, որ ամերիկեան շուրջ 90 քաղաքային խորհուրդներ իրենց ընդհանրութիւնը յայտնած են Իրաքի դէմ հաւանական պատերազմի մը:

«Նահար» կը հաղորդէ. «Կանխելով ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի այսօրուան ժողովը եւ Իրաքի դէմ կորիզային վեճերու օգտագործման հաւանականութեան մասին Ռամադանի յայտարարութիւններուն լոյսին տակ՝ Իրաքի դէմ պատերազմը սկսաւ յատուկ գործողութիւններով եւ Միացեալ Նահանգներ կը պատրաստեն կիսուրական վարչակարգ ման:

**Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ**  
**ՆՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ**  
Սուրբ Սարգիս զօրավարի տօնը միեւնոյն ժամակ եկեղեցույս անուամակը շրջան տօն է: Այսու կը տեղեկացնենք մեր սիրելի ժողովուրդին, թէ տօնը այս տարի կը զուգահեռի Կիրակի, 16 Փետրուարին:  
Այս առիթով պիտի մատուցուի Ս. պատարագ: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)  
- Սկիզբ ժամերգութեան՝ 7:30ին  
- Ս. պատարագ՝ 9:30ին  
- Քարոզ՝ 10:30ին  
- Ժամերգութիւն՝ 11:00ին  
Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:  
Պատարագէն ետք պիտի կատարուի մատարագի զօրակոչումը:  
**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
**Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**NOAH'S ARK ART GALLERY**  
Կը ներկայացնէ  
**ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՅՈՎՍԷՓ ԳԱՄՊԱՐԵԱՆԸ**  
Հովանաւորութեամբ՝  
**ՊՐ. ԳԵՂՈՐԳ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ**  
Յուցահանդէսին հաստիքը պիտի տրամադրուի «ԱԶԳԱԿ»-ի ֆոնտին  
Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ Երկուշաբթի, 24 Փետրուար 2003, ամէն օր, առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00ը:  
ՀՐԱԿԵՐ

**ԼՕԽԻ**  
ՀԻՆԱՆՎՈՐՈՒԹԵԱՆ  
ԴԵՍԵՆԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԻ  
ԶՐՈՅՑ - ԿԼՈՐ ՍԵՂԱՆ  
**«ՀԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ - ՆՈՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ»**  
Կը ներկայացնեն՝ **ԳԵՂԱՆԻ ԷԹԵՍԵՉԵԱՆ ՊԵՏԻ ՓԱՆՈՍԵԱՆ ԿԻՐԵՆ ԱՒԱԳԵԱՆ**  
Կը համադրէ՝  
Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 17 Փետրուար 2003, առաւօտեան ժամը 10:30ին, «Արաքի Պուլուրի» ընկերութեան կողմէն: «Թճնուկեան» սրահին մէջ:  
ՀՐԱԿԵՐ

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ**  
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ**  
**ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**  
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



# Գրական Էջ

## ԲԵՂՈՒՆ 35ԱՄԵԱԿ ՄԸ

Հայաստան աշխարհի անբացատրելի խորհուրդէն, անդադար կրկնուող տեսիլներէն եւ օրըստօրէ ալ աւելի անագնացող կարօտէն 14 տարեկան հասակին թեւ ու թոխք առած բեհրանահայ պատանին, երբ «Ալիք»ի գրական էջերուն կը ստորագրէր «քո կարօտից» քար դառնալու, ծովանալու, հոսելու, մարելու, սառելու եւ դարձեալ ապրելու իր անդրանիկ ճիշդ, իրանահայ գրական շրջանակները կը նախագգային, որ Վարանդ գրչանունին տակ գրական ասպարէզ կանխահասօրէն մուտք կը գործէ երկնատուր շնորհներով օժտեալ նորընծայ մը: Սուրբիս Քիւրքէան անուն պատանին «Հայաստան աշխարհ» անուն կարծ, բայց սրտազրաւ բանաստեղծութիւնը կ'ըլլար գրական պայծառ անձնաբուրդ: Անբացատրելի ներքին մղումով մը, սիրոյ պատանեկան բոցկլտումները երգելու փոխարէն՝ մուսաներուն հետ ժամագրուած սիրահարը իր հոգիին նուրբ լարերուն վրայ առաջին հերթին կը հնչեցներ հայրենաշունչ տաղեր: «Ալիք»ի մէջ լոյս տեսնող Վարանդի բանաստեղծութիւնները իրարու կը յաջորդէին, եւ 1972ին, երբ 18ամեայ բանաստեղծը ընթերցողին կը հրամցէր «Արեւի ճամբով» խորագրեալ իր անդրանիկ քերթողագիրքը, երիտասարդ քերթողին հայտարար զիմագիծը աւելի կը յստականար:

Լոյսի թափանցիկութեամբ հրապուրիչ, նոր արշալոյսներու տեսիլներով բոցարծարծ, սիրոյ տառապանքով ազնուացած, բայց մանաւանդ իր ժողովուրդին ու համայն մարդկութեան անլուռ ցաւերով բխրացած ձայնը քերթողին կ'առանձնանար իր սերունդի շնորհալի մնացեալ նորընծաներու խտւերէն: Երբ 1973ին հրատարակուած «Արշալույս»ին կը յաջորդէին «Հոյակոյթ», «Հոյակ Տրոյ», «Արեւաբար» եւ «Շիրիտըն ու շահը» խորագրեալ քերթողագիրքերը:

Բազմերանգ, բազմաձայն, համապարփակ եւ ամբողջական սիրոյ երգիչին զիմանկարը ամբողջացած էր արդէն: 1970ական թուականներուն լոյս տեսած Վարանդի վերոնշխարակներուն մէջ ծաւալող որակական արժեքները տակաւ առ տակաւ կը բացուէին նոր հորիզոններու, երբ արդէն ձեւաւորուած բանաստեղծը կը շարունակէր ընթերցողին հրամցելու գեղագիտական նոր ձեւերով մեղմեցնող յատկանշուող սրտագրաւ ու հրապուրիչ նորանուն քերթողագիրքերը:

Տեսանելի աշխարհէն աներեւոյթ ոլորտներ ուղեւորութիւնը կը յայտնաբերէ կոյս աշխարհներ, որոնք գերզգայուն բանաստեղծին հոգիին պրիսմակէն անցնելով՝ մեղի կը ներկայանան ինքնազորով, բարձր, թափանցիկ ու թելադրական, բազմերանգ ու հոգեգմայլ սիրոյ երգերու կախարհական փունջերով:

Գրական բազմաբնոյթ փորձառութիւններով, 35ամեայ բեղուն եւ ուսանելի կենսափորձով իր զիմագիծը բիրեղացուցած բանաստեղծն է առ արդէն: Իրանահայ մերօրեայ գրականութեան արժանաւորագոյն ներկայացուցիչը, որուն լարերէն հնչած մէն մի ձայն իւրապատուկ շեշտ ու գրաւորութիւն ունի, բոլոր ու երանգ, կախարհանք ու թելադրանք: Արտակարգօրէն բազմաբեղուն եւ բազմերանգ 35ամեայ վաստակին թիւով 16 քերթողագիրքերն ու բանաստեղծութեանց տետրերը ամփոփող «Փրփուրից մրուր» հաւաքածոն է՝ կերտալուստ ապացոյցն է այս նշարիտ նշանաբաններէն:

Բազմաձայն ու ամբողջական բանաստեղծի մէկ քաղցր ներկայացուցիչն է Վարանդ, որուն քերթողական 35ամեայ կենսափորձը լաւագոյն գրաւականն է գալիք նուամենեւեւ...:

Ս. ԿՐԱՎՈՍԵԱՆ

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

... Հանելի է ընթերցումը չափածոյ էջերուդ, որոնք իրենց արեւելոյսայն շունչով, պարզ ու երգուն շեշտերով կը մատնեն միանգամայն գգայուն եւ եռուն սրտի մը ալլագան ապրումները: Շնորհակալ եմ նուէրիդ համար:

ՃԱԳ Ս. ՅԱՎՈՐԵԱՆ (30 Նոյեմբեր, 1984)

... Իսկ «Յառաջ բերոց»ը փայլում է իր առնական շնչով, բիւրեղացած դիւցազներգութեամբ, պատկերների խտութեամբ ու գաղափարների հարբստութեամբ: Եւ որքան ուժ ու միաժամանակ զսպուածութիւն կայ այս գործում: Ըստ իս, մեր արդի դիւցազներգական լաւագոյն գործերի շարքում կարելի է դասել:

ՅԱՎՈՐ ԿՐԱՎՈՍԵԱՆ (1-19-1989)

Վարանդի «պոեմական» ընթերցումը, քանի մը շեշտ, տաք տողերէ դուրս, ընթացիկ գեղումն է ցիր ու ցան ապրումներու՝ առանց որեւէ կեդրոնական մտածումի առանցքին, առանց դպնալու քսաներորդ դարու մեծ ու պատիկ մեղքերուն ու կռնակը դարձուցած իր անցեալին, իր ապագային ու կեդրոնացած անմիջական անցեալին, մնացած իշխասակներու տպաւորութիւններու կտորուանքներուն վրայ:

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ (1989)

... Երիտասարդ քերթողը ոչ միայն ինքնատիպ է լայն հորիզոններու բանաստեղծ, այլեւ՝ ներշնչում ունի եւ գիտէ պատկերացնել անմիջական առարկայական շրջապատը՝ իր դրոշմներով, պոզիտիւններով, սրտփող սրտերու նման փակ ու բաց պատուհաններով, սրբարաններով եւ թատրոնով: Մէկ խօսքով՝ գիտէ ապրիլ մարդոց հետ, մարդոց մէջ ու մարդոց համար: Բազմազան ներշնչումներու բանաստեղծն է Վարանդ...

ԳՈՂԱՐ ԹԵՕԼԵՕԵԱՆ (1990)

... Ժողովածուների այս քանակը, երիտասարդ բանաստեղծի հետեւողական աշխատանքը, լայն հայացքը հին

ու նոր քերթողութեան հանդէպ վկայում են նրա ստեղծագործական պրպտուն նկարագիրը: Սա վկայում է նաեւ նրա ձգտումը ընկալելու իւրացնելու քերթողութեան այդ հարստութիւնները, եւ պէտք է յուսալ, որ այս հետաքրքիր ու համարձակ կուտակումը մի նոր, աւելի հարուստ չըջան է բացելու Վարանդի քերթողութեան մէջ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ ԹՈՓՉԵԱՆ (1990)

... Եւ այսպէս, անցաւորէն դէպի անանցը, երկրային ափերէն դէպի երկնային ոլորտներ՝ ձգտող իր «դժուար անցումներից», Վարանդ ալ կրցած է գտնել նշմարիտ հունը գեղապաշտ ձգտումին, ուր ամէն բան կը թուի ըլլալ սուրբ եւ անարատ, համայնական եւ գեղեցիկ...

ՅԱՎՈՐ ԿՐԱՎՈՍԵԱՆ (1990)


«Բանաստեղծը, այն է, ասել է Բաֆֆին, - որ վերագրում է անցեալը, ապրում է ներկան եւ գոյում ապագան»: - Վարանդն օժտուած է բանաստեղծական այս յատկութեամբ, հետեւաբար, նա ունի պոեմական վերելքի լաւագոյն կռուանքը: Ի դէպ Վարանդը լարուած ուշադրութեամբ՝ իր հոգու զգայաւորանքներով տեսնում է անտեսանելի երեւոյթները, լսում՝ անլսելի ձայները եւ հոտոտում է, շօշափում՝ աննիւթն ու անմարմինը, որոնք միս ու արիւն են առնում իր տողերում...

ՎԱՆԷ ԱՐՄԵՆ (1994)

Եթէ բնենք, թէ Վարանդը սիրերգակ բանաստեղծ է գերազանցապէս, սխալած չենք ըլլար: ուրիշ ինչ ալ գրէ Վարանդը՝ ընկերային թէ քաղաքական բովանդակութեամբ, դիւցազներգութիւն գրէ թէ հնչեակ, այդ բոլորը իրենց որպէս ենթահող ունին արարիչ սերը: Մերն է աղբիւրը բոլոր դիւցազներգութիւններուն, որոնք երբեմն կրնան կոչուիլ հայրենասիրութիւն, մերք կրնան կոչուիլ սեր հողի հանդէպ, սեր մարդկութեան հանդէպ եւ կամ բարձր մերք փոխուելով կրնայ կոչուիլ արդարութիւն, ազատութիւն, խղճարարութիւն... այս բոլորին ակունքը սերն է:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ (1997)

## «ՓՐՓՈՒՐԻՅ ՄՐՈՒՐ»



ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ (ՔՈ ԿԱՐՍՏԻՅ...) Լոգանքից յետոյ-Մրտելու համար...

Ես քո կարօտից մի քար եմ դառել, քարերիդ նման  
Ու քար դառնալով Մասիս եմ դառել, Մասիսիդ նման,

Ես քո կարօտից արցունք եմ դառել ու անվերջ հոսել  
Արալ եմ դառել, Սեւան եմ դառել, մի ծով եմ եղել:

Ես քո կարօտից ոչնչացել եմ, մարել եմ, սառել,  
Բայց եւ քո յոյսով նորից ապրել եմ ու կրկին մարել:

Հայաստան աշխարհ, ես քո ցաւիցը մի ցաւ եմ դառել,  
Բիրաւոր անգամ մարել եմ, սառել ու նորից ապրել:

1968, Փետրուար

### ՀԵԹԱՆՈՍԱԲԱՐ

Ձեռքս յունանամ կրծքիդ տաք ճիւղում,  
Վարսերիդ գինին ըմպեմ գաւաթով,  
Կապուտանի պէս քո մերկութեան դէմ  
Մերկ եմ Այրարատ հյօր գազաթով:

Առիծներ բռնեմ աչքիդ խորերում,  
Քաղեմ սրինգներ յօնքիդ լճափից.  
Ծարաւեմ ճամբիդ կապոյտ խութերում,  
Ինձ կախեմ ոտիդ հիւր աստղակաթից...

Մանկանամ ծոցիդ քնքշանքի մէջ յար,  
Պատանի դառնամ Առասպել-Քնում,  
Չարքնեմ, այր դառնամ քարայր, կրաքար,  
Իջնեմ բագինի, կրծքիդ մեհենում:

Գազաթերիդ մէջ մի Տապան լինեմ,  
Որպէս ողջակէպ, Նոյ ու Մարգարէ,  
Որ ծնունդ առնի կեանքը աշխարհում,  
Որպէս հրէ սալ ու կոսն քարէ...:

1979, ձմեռ

### ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Գուցէ գիշեր եւ վերջին անգամ  
Համբուրեմ խոնամ երկրքները քո.  
Ծուր իջնեմ փոքրիկ խորանիդ դիմաց,  
Ինչպէս Նոր տարուան կապոյտ երեկոյ...

Գուցէ համբուրեմ վախերդդ աղի  
Եւ հեքիաթներիդ գիրքը մոզական  
Ու վերջին անգամ արցունքներ քաղեմ  
Եւ թողնեմ քո ջիւղ գիրկը մայրական:

Գուցէ չուզեմ, բայց դա պէ՛տք լինի,  
Թողնել երապի Դիւեակն անաչառ,  
Անխօս ու անձայն երթամ մտացիր,  
Գու իմ մանկութիւն, իմ հեռո՛ւ աշխարհ...:

1980

### ՏՈՂԵՂՄԵՉ ՏԱՐԻ

Գարունը լաւ է  
Գծուելու համար.  
Սակայն աշունը՝  
Այդ խենթութիւնը  
Ու նրա բերած  
Չարիքները հեշտ  
Յիշելու համար:

Ամառը լաւ է  
Ողջ հուրիւրը՝

Յանկութեան, երգի...  
Կարմիր ջրվեժում  
Սուզելու համար

Սակայն ձմեռը՝  
Այդ խեւ, անպայ

28.3.1988

### ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ 1

Մի գիշեր լինեմ մի հիւրանոցում,  
Անցորդի նման ձեր քաղաքը գամ,  
Հանդիպեմ քեզ մի բանուկ փողոցում,  
Սրտիս տակ կրկին ինչ-որ բան պգամ...

Ու ինձ հետ մտնես մի քաֆէ սուրճի,  
Յետոյ գունաթափ, սենեակ բարձրանաս,  
Մեր գլխի վերեւ Սուրբ Մեղքը շրջի,  
Հեքոտ պրոյցից մարես, արբենաս:

Յետոյ ինձ մերժած շրթերդ դողան,  
Շշնջաս- ձերմակ ծաղիկ ու գինի...  
Իմ աչքերի մէջ արցունքներ շողան,  
Բայց մեր մէջ նորից ոչինչ չլինի...:

2.11.1986

### ԻՐԻԿՆԱՊԸՆ

Նարինջ արեւ էր: Նարինջ երեկոյ:  
Նարինջագոյն էր շապիկըդ բուրեան:  
Քո տերեւագոյն հայեացքի ներքոյ  
Տուայտում էր յուր հատորը՝ «Դուրեան»:

Դէմի պատշգամբում թրքուիին. թաքուն  
Շէկ վարսն էր ստուլ արեւի շողին.  
Կրծքիդ մէջ շարժուեց տեսչանք մի անքուն,  
Շէկ շողը շաղուեց փեղկերի քողին:

Մէջքից գրկեցի ուտերդ բուրեան,  
Ուռճացան յանկարծ կուրծքերդ յուրթի.  
Ձեռքիդ դողողաց հատորը՝ «Դուրեան»,  
Շուքուն շիկնեց վառ փունջը վարդի...:  
14-15 .3 - 1998

### ԿԱՐՍՏԱԵՏ

«Ինձ նաւասարդեան յուսաբաց տուէք».  
Ու Մասեաց դաշտի մենաւոր բարդին.  
Այդ յուսաբաց յոյսը թաց տուէք,  
Թարմացած նայեմ ձեր Արարատին:

Ինձ Ծաղկաձորում ջրաղաց տուէք,  
Հա՛ց անեմ ոսկին կարօտիս հասկի.  
Տե՛նչիս հովուիւնս կուրծքը բաց տուէք՝  
Կորած յոյսերիս սնի ու հսկի...

Ինձ Վարդենիսում մի փարախ տուէք,  
Վարդ գառնուկներս զոհ չերթան բուրի.  
Ինձ Բիրակասում մե՛ն մի ասող տուէք,  
Որ վառեմ Աստղը ո՛ղջ տիեզերքի...:

11.3.1998

Երեւան: Մի շէնք: Հոկտեմբերի 10:  
Խաւարների տակ կանգնել էինք մենք,  
Այն կողմ քաղաքն էր մտել պատերազմ,  
Մեր շրթունքներին դողում էր մի մեղք:

Սիւնացել էինք մենք շէնքի դիմաց,  
Իսկ մեզ վրայ՝ մի մութ-կանաչ անձրեւ.  
Ասեւ մեկնել էր ժամանակն անդարձ  
Ու մեզ թողել էր դէպքերի յետեւ:

Յանկարծ խոյսաբար դու ինձ թուացիր  
Բարձր շէնքերից ինձ նայող տեսիլ.  
Թուաց աշխարհը մի շէնք է անձիր,  
Որի մեծ մուտքին հիմա ենք հասել:

Իմ մէջ քանդուել էր մրրիկն իմ ցեղի,  
Քո մէջ վառուել էր արիւնն մեր պայծառ.  
Հողմը շնչում էր խենթ ու կատաղի  
Ու կրակները բորբոքում անձայր:

Քո սառն ձեռքը մէջ թռչնեց մի ծաղիկ,  
Շունչս քեզ անցաւ, ինձ՝ երանգը պարզ,  
Այդպէս պարտուեցինք, վե՛հ ու անաղիկ,  
Երեւան: Մի շէնք: Հոկտեմբերի 10:

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## «ԻՆԹԵՐՆԵԹ ՔԱՖԷ»ՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՅԹԸ

Տասնամեակ մը առաջ պատանիներ իրենց ազատ ժամերը կ'անցընէին ըսկին մէջ ֆուտբոլ կամ պասթեթպոլ խաղալով իսկ տարիքով աւելի փոքրերը նոյնպէս ունէին իրենց յատուկ խաղերը՝ «աչք-կապուկ» եւ այլն. առ այդ, փոքրիկներու ձայնով «Կը շէննային» փողոցները: Ծնողները, ինչպէս միշտ, դժգոհ էին այս աղմուկէն եւ կը փորձէին «զսպել» իրենց զաւակները, որպէսզի անոնք իրենց դասերուն վրայ կեդրոնանան, այսպէս ըսած՝ «փողոցային» չզրուան: Փողոցները, թաղերը ունէին նաեւ փոքրիկներուն աչքին «վատահամբաւ» երեւցող կիները, որոնք


դարձ կ'ունենայ նոր սերունդներուն վրայ, եւ ատիկա նոյնքան համացանցին յանցանքն է, որքան ոճի մը յանցանքը դաշտինը: Ասկէ տասնամեակներ առաջ մասնագէտ մը արտայայտած էր այն անհեռատես կարծիքը, թէ «տան մէջ համակարգիչ ունենալու ոչ մէկ կարիք չեմ գգար»: Այսօր համակարգիչը դարձած է նոյնքան կարեւոր, որքան, օրինակ, լուսացքի մեքենան, եւ համակարգիչով աւելի դիւրաւ եւ արագ կատարուած աշխատանքները այլ միջոցներով ընելը նոյնքան անհեթեթ է, որքան լուսացքի մեքենայի դարուն՝ հագուստները ձեռքով

մէջ: Դպրոցական աշակերտը այս օրերուն մինչեւ գիշերուան ուշ ժամերը կը մնայ «ինթըրնէթ քաֆէ»ներուն մէջ, կամ եթէ քիչ մը աւելի «բախտաւոր» է՝ տան անձնական համակարգիչին դիմաց ուշ գիշերին կը քնանայ, առանց մոռնալու, որ քանի մը ժամացոյցներու «ալարմ»ը լարէ, որպէսզի կարենայ առտուան ժամը եօթին արթննալ եւ... դպրոց երթալ:



Կ'օգտագործէր համացանցը: 2002ի տուեալներով այս համեմատութիւնը բարձրացած է 24 առ հարիւրի: 5 - 9 տարեկաններուն 25 առ հարիւրը, իսկ 10 - 12 տարեկաններուն 36 առ հարիւրը համացանցը կ'օգտագործէին 1997ին, իսկ 2002ին անոնց համեմատութիւնը բարձրացած է յաջորդաբար 56 եւ 57 առ հարիւրի: Այս տուեալները, ինչպէս ըսինք, անպայմանօրէն ժխտական չեն: Համացանցը ճիշդ կերպով օգտագործող անհամեմատ աւելի «համացանցի մոլոր»ները, որոնք ախտաճանաչուած կատարելու համար ներկայացուած են ըստման թեւեթիւններ: Հոգեբանի մը հրատարակած «Քոյր իմ տրեք» գիրքը առաջիններէն էր, որ ընդգծեց այս «մոլորութեան» առաջը առնելու կամ անկէ ձեռքազատելու մարտահրաւերները:

Անչափահասներ համեմատաբար աւելի «վատահամբաւ» են համացանցի անփոյժ օգտագործումին վնասներէն: Երկար ժամեր համացանցին դիմացը անցընող փոքրիկներ «իրական» աշխարհով նուազ հրապուրուած կը դառնան, «անիրական» աշխարհի բարեկամութիւնները կը գերազանցեն իրենց առօրեայ բարեկամական կեանքէն, իրենց դասերը սորվելու ատեն յաճախ անսալով «համացանցի կանչ»ին՝ «մատին ծայրով» աշխատանք կը կատարեն, համեմատաբար նուազ ժամանակ կ'անցընեն մարդկան ընդմիջումները, «չէք»ն ու «կէյմ»ը կը դառնան, անկարելի է ահագանգ չհնչեցնել: Լուծո՞ւմը: Արդիւ՞նք ինչպէ՞ք փոքրիկներուն «ինթըրնէթ քաֆէ»ներու այցելութիւնը կամ ընդհանրապէս համացանցի օգտագործումը: Ո՛չ: Սակայն հարկ է չափաւորել գործածութիւնը եւ գիտնալ, թէ անոնք ինչպիսի՞ «քաֆէ»ներու մէջ կ'անցընեն իրենց ժամերը: Փոքրիկը համակարգիչէն եւ համացանցէն հեռու պահելը, այս յոգուածին սկիզբը կատարուած համեմատութեան հետեւողութեամբ, տան գործերը կատարողը լուսացքի մեքենայէն հեռու պահելու համար է: Համացանցը 21րդ դարու «գէնը» է եւ անպայմանօրէն պէտք է գիտնալ զայն լաւ գործածել: Սակայն ուղղեք մեր գաւակները՝ ճիշդ ձեւով օգտագործելու զայն եւ հեռու մնալու անոր ինքնակործան մոլորութիւններէն: Ահա՛ միակ լուծումը, լաւագոյն ընտրանքը:



դոյով ջուր կը թափէին աղմուկներուն վրայ՝ «ամբոխը» ցրուելու համար: Այսօրուան հեւրոտ դարաշրջանի տասնամեակ մը կարճ ժամանակ չէ: Ուշագրաւօրէն նուազած է բակերու մէջ կամ փողոցներուն անկիւնը ֆուտբոլ խաղացող տղոց թիւը. «փողոցային» այս մշակոյթը անհետացման վտանգին տակ կը գտնուի... Փոքրիկներուն աղմուկէն խանգարողներ հաւանաբար ուրախ են, սակայն երեւոյթը այդքան ալ դրական չէ: Այսօրուան պատանիները երբեմնի ժամանցները մէկ կ'ընեն թաղերէն ու փողոցներէն կ'անցնին առանց աջ ու ձախ նայելու եւ իրենց խաղընկերները փնտրելու: Ի վերջոյ, բոլորը գիտեն, թէ ո՛ր է հանդիպման նորագոյն վայրը: «Ինթըրնէթ քաֆէ»...

Պատանիին համար այս երկու բառերուն գուցորդումը որքան առինքնող հնչեղութիւն ունի: Ան ընձեռուած ամէն առիթ կը գոհարելէ այդ «քաֆէ»ներու «բազին»ին՝ համակարգիչին վրայ եւ կը հեռանայ քիչ մը աւելի գոհունակ, սակայն՝ առանց գիտնալու այդ գոհունակութեան սուղ փոխարժէքը, գոր վճարած է ժամական քանի մը հազար սուկին գուգահեռ...

«Կ'ա՛ց» կ'ըսէ մէջս եւ անցող համացանցի սէրը: այս տղաքը այդքան ալ վնասակար չեն չէ, որ կ'ընեն: Սակայն ճշմարտութիւնը պէտք է թաղել: Իր բոլոր առաւելութիւններով հանդերձ, համացանցը գլխաւորաբար ժխտական անդրա-

լուսալը: Եւ տակաւին չենք խօսիր համացանցին մասին, որ աճաբարի վերածած է բոլորս. ի վերջոյ, մատնեցու քանի մը շարժումով մենք մեր դիմաց կ'ունենանք աշխարհը՝ իր գոյներով, սեւով եւ ճերմակով, մոխրագոյնով:

Սակայն փոքրիկը կամ պատանին համացանցին հետ կը վերաբերին այնպէս, ինչպէս գիտնողը խմբի շրջին հետ: Եւ համացանցը, այդ չափաւորուող շրջը, օրըստօրէն առաւել կը գիտնողներէն գինք...



կը զբաղի «չէք»ով (համացանցի միջոցով գրոյց) կամ «կէյմ»եր խաղալով. լաւագոյն պարագային՝ երգեր կ'արձանագրեն կամ իր նախասիրած աստղերուն կայքերը կ'այցելէ: Եւ մոլորութիւնը հետզհետէ կը տարածէ իր արմատները պատանիին

տարակած «Քոյր իմ տրեք» գիրքը առաջիններէն էր, որ ընդգծեց այս «մոլորութեան» առաջը առնելու կամ անկէ ձեռքազատելու մարտահրաւերները:

Անչափահասներ համեմատաբար աւելի «վատահամբաւ» են համացանցի անփոյժ օգտագործումին վնասներէն: Երկար ժամեր համացանցին դիմացը անցընող փոքրիկներ «իրական» աշխարհով նուազ հրապուրուած կը դառնան, «անիրական» աշխարհի բարեկամութիւնները կը գերազանցեն իրենց առօրեայ բարեկամական կեանքէն, իրենց դասերը սորվելու ատեն յաճախ անսալով «համացանցի կանչ»ին՝ «մատին ծայրով» աշխատանք կը կատարեն, համեմատաբար նուազ ժամանակ կ'անցընեն մարդկան ընդմիջումները, «չէք»ն ու «կէյմ»ը կը դառնան, անկարելի է ահագանգ չհնչեցնել: Լուծո՞ւմը: Արդիւ՞նք ինչպէ՞ք փոքրիկներուն «ինթըրնէթ քաֆէ»ներու այցելութիւնը կամ ընդհանրապէս համացանցի օգտագործումը: Ո՛չ: Սակայն հարկ է չափաւորել գործածութիւնը եւ գիտնալ, թէ անոնք ինչպիսի՞ «քաֆէ»ներու մէջ կ'անցընեն իրենց ժամերը: Փոքրիկը համակարգիչէն եւ համացանցէն հեռու պահելը, այս յոգուածին սկիզբը կատարուած համեմատութեան հետեւողութեամբ, տան գործերը կատարողը լուսացքի մեքենայէն հեռու պահելու համար է: Համացանցը 21րդ դարու «գէնը» է եւ անպայմանօրէն պէտք է գիտնալ զայն լաւ գործածել: Սակայն ուղղեք մեր գաւակները՝ ճիշդ ձեւով օգտագործելու զայն եւ հեռու մնալու անոր ինքնակործան մոլորութիւններէն: Ահա՛ միակ լուծումը, լաւագոյն ընտրանքը:

Ուսումնասիրութիւններու համաձայն, 1997ին 2 - 4 տարեկան փոքրերուն 14 առ հարիւրը


## ՊԱՅԲԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ «ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՊՈՒՆԿԱԳՐՈՒԹԵԱՆ» ԴԷՄ



Բրիտանիոյ ոստիկանութեան շղթայագերծած «Օփըրէյշըն տէյ» լայնածաւալ գործողութիւններուն շնորհիւ, անցնող ամիսներուն ձեռքազատուած են աւելի քան 1600 անձեր՝ համացանցի միջոցով մանուկներու չարաչափ հուսի յանցանքով: Անոնց 46ը ուղղակիօրէն ամբաստանուած է մանուկներու սեռային չարաչափ հետեւումով:

Աւելի քան 40 մանուկներ փոխադրուած են ապահով վայրեր: «Օփըրէյշըն տէյ» բրիտանական տարրերակն է գործողութեան մը, որ սկիզբ առաւ Միացեալ Նահանգներու մէջ՝ լայնաշաղկապ լու համար համացանցի միջոցով «մանուկներու պոռնկագրութիւն» տարածող եւ մանուկներ չարաչափ խմբաւորումներ:

Ձերբակալուածներուն կարգին են ոստիկաններ, բժիշկներ եւ երեւելի անձնաւորութիւններ: Բրիտանիոյ ոստիկանութիւնը Միացեալ Նահանգներու պարտական մարմիններէն ստացեալ «քրեալիք քարտ» կատար մանրամասնութիւնները 6500 բրիտանացիներու, որոնք մանուկներու պոռնկագրութեան կայքերու բաժանորդագրուած են: Ոստիկանութիւնը առաջին հերթին այս ցանկէն ձեռքազատած է այն անձերը, որոնք իրենց աշխատանքին բերումով առաւելագոյնս չփուռ կ'ունենան մանուկներու հետ (բժիշկներ, ընկերային ծառայողներ, եւ այլն): Ոստիկանութիւնը յայտարարեց, թէ ցանկին մէջ ընդգրկուած բոլոր անձերուն պարագաներուն քննարկումը կ'ընայ ենթադրել երկու տարուան աշխատանք:



**Հ.Յ.Գ. Լ.Ե.Ս.**  
«Ա.ԾԻՐԱԿԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ

**ԱՉԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՉԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԲՐՈՒՄԾ ԶԵՆԱՐԿ**

**ԿԸ ԲԱՆԱՊՈՒԷ ԸՆԿ. ՅՈՎԿԱՆԵՍ ԹԱՍԱԼԵԱՆ**

\* ԳԵՂԱՌԻԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Տեղի կ'ունենայ Երեւանի 18 Փնփրուար 2003-ի Երեւոյեան ժամը 8:00ին, Յակոբ Տէր Մելքոնեան պահիւն մէջ:

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**


«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

**ԽԱՉԿ ԿՐՈՒՄՆԵԱՆ**

# Մանկապատանեկան

## ԿՈՒՓԹԱ՝ ՊԶՏԻԿ ՀՆԴԻԿԸ

21 Փետրուարը տօն է Հնդկաստանի մէջ: Կուփթա 9 տարեկան է, ան կ'ապրի Պենարտսի մէջ, որ կրօնական բաղադր մըն է: Ան շատ ծանօթ է այս տօնին:



### ԻՆՉ ԿԸ ՏՕՆԵՆ 21 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

Այդ օրը Շիվայի տօնն է. ան Հնդկաստանի ամէնէն կարեւոր շատուածներէն մէկն է: Հնդիկները այդ օրը կը տօնեն անոր ամուսնութիւնը Փարվաթիի հետ: Հնդկաստանի մէջ գոյութիւն ունին բազմաթիւ շատուածներ, ինչպէս՝ Պրահմա ստեղծագործը եւ Վիշնու պահա-

